ԱՇԼԵՒԱՇԼՔ

ԴԵՒՏՈՒՆԸ

Ո՞ր աշխարհ իր դևը չունի։

Տարօն ալ է ունեցեր իր դևերը, լէգէոնն իր դևերուն։

Ինչ է դև մը։ —

Բազատունեան Աստուածաշունչ մը կայ՝ որուն առաջին էջը կը զարդարէ դրախտի դասական մէկ նկարը։ Լոյսի ու խաւարի, գեղեցկի ու տգեղի, հրապոյրի ու նողկանքի, զուարթութեան ու տրտմութեան հակադրութեան մը նկարը կ'ընծայէ տպաւորիչ։ Վերն է լոյսը՝ որ կաթնաթոյր ամպերու մէջ նստող ծերունիի մը ճառագայթարձակ եռանկիւնապսակէն կը ծաթի և եդեմը կ'ողողէ։ Վարը խաւարն է՝ որ մոռոտաղէմ կնոջ մը լայնածաւալ ու կպրաթոյր թեւերէն կը կաթի և Դժոխքը կը պարուրէ։ Հոս թագակիր արուն ալ կայ, եռաժանին ծնոտը, մաղձալից աչքը յառած հոն՝ վերը, ուր մանկունակ հրեշտակներու պարն է բոլորեր ծերունիին շուրջ։ Ո՞րքան հովուերգական են սիրամարմնոջ լոյսն ու լոգանք ջուխտ մը ձիւնափայլ կարապներու, գրգռտ վզափարումները երկու ճնճղուկիկներու, նապաստակի մը աներկիւղ ճարակիլը բաշագեղ առիւծին ներքև և վերջապէս զգաստ թեւընդմիջանցումը զոյգ մը մերկամարմին անմեղներու, անվրդով հոգեմայլանքի մը մէջ՝ ուր էգը ծերին կը նայի և արուն բնութեան, — աղէտալի հայուածք, — նոյնքան ողբերգական է լուռնիստ թանձրութիւնը մթութեան՝ որ բարդ ի բարդ կը բարձրանայ ու կը թաւալի։ Դրախտի տխուր հակադրութիւնը ասով չի լրանար։ Աղշամուղջի ձախակողմի անկիւնէն դուրս կը սողոսկի «իմաստնագոյն» կենդանին, օղակ գալարումներով, ժահրոտ լեզուն դուրս ձգած և խարդաւանքի լեղին աչքին մէջ՝ որ կը դիտէ անքթիթ ու շեշտակի առաջին Է�անպտորը։

Ո՞հ, մանկութեանս օրերուն ո՞րքան էի լսեր դևերու պատմութիւններ, նկարագրութիւնն անոնց սև թեւերուն, անոնց ահարկու կերպարանքին, անոնց զուարճալի պոչերուն։ Ո՞րքան էի տեսեր նաև անոնց նկարները եկեղեցիի խորաններու վարագոյրներուն կամ հայրենիքիս Ս. Փրկչայ վանքի պատերուն վրայ։ Կոտոշաւոր և պոչաւոր դևեր բոլորն ալ, որոնք այսօր զարմանալիօրէն ինձ կը յիշեցնեն մեր հին ալքերն ու թղպաները։ Դևեր՝ որոնք անհոգի քրքիջներով քարշ կու տան ու կը տանին անողոք հրեշտակներու ձեռքին մէջ ճճռուող արդարութեան նժարէն մեղաւոր դուրս եկած թշուառ հոգիները շղթայակապ։ Եւ անոնց կեռ պոչերը այնքան էին ուշադրութիւնս գրաւեր որ կը կարծէի թէ ամէն պոչ դև մը կ'ենթադրէ։ Ի զուր էի ջանացեր գտնել նաև պոչերը այս նկարի դևերուն՝ որոնք, առանց ատոնց կորսնցնելով իրենց գրօսեցուցիչ ծիծաղելիութիւնը, կը դառնային աւելի պակուցիչ։

Ահա թէ ինչպէս կը ծնի դևը մանուկի մը մէջ...։

Զէ՞ որ, սակայն, ծնած բան մը կը մեռնի։ Իմ մանկութեան դևն ալ օր մը մեռաւ...։

*
* *

Միթէ դևը մահկանացու է։

Մուրատատուրի մենաստանին հարաւային մեծ դռնէն ներս մտնելով՝ ուխտաւորը կը տեսնէ մատռաձև փոքրիկ շէնք մը ամբմտեան պարապին մօտ։ Սուրբի մատուռ մը, — պիտի խորհի նա առաջին ակնարկով։

«Դատունն է այդ։ Լուսաւորիչ Հայրապետ Դեմետրի և Գիսանէի բոլոր դևերն է հոն շղթայեր։ Մտիկ տուր և հոն փորուած ջրհորի ալքէն դու պիտի լսես դեռ անոնց խժրտոցն ու մռմռոցը»։ — այսպէս պիտի պատմէ քեզ աւանդապահ վանականը։

«Լուսաւորիչը ժողվեց դիւան, լցեց զնդան.
Կաղ դևն եկաւ ասաց եամ՝ն,
Ջիս մի՛ դներ զնդան։
Ես կ'եղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան,

digitised by A.R.A.R.@

Ցանիմ թափեմ փրէքթման,
Մինչ որ Քրիստոս գայ դատաստան». —

Ա՛յսպէս կ՚երգեն և՛ Ցարօնոյ աշուղ-ները։

*

Դիտո՛ւն. — Դէմ առ դէմ այն Ցան՝ ուր Մուրատատուրի Աստուածը կը փառաբանուի երկնքի ու երկրի մեղեդիներով։ Լոյսի ու խաւարի հակադրութիւն մը հո՛ս ալ, որ ինծի կը յիշեցնէ Աստուածաշունչի նկարը։ Եւ երկուքը մէկ գիս կը փոխադրեն աշխարհ մը՝ ուր կ՚ըսեն թէ բարի Աստուած դրախտն է տնկեր, խաղաղ, անվիշտ, երջանիկ և ուր ես այժմ կոթողուած կը տեսնէի, այդ դրախտի մէկ անկիւնը, բարձունքի մը վրայ, չար դևի մ՚այս տնակը... մռայլ, հեղձուցիչ, հոգեխոռով։

Միայն կաղ դևը կայ՝ որ փոշեհանն է եղեր սուրբ Կարապետու։ Զէ՞ որ Մուրատատուրն ալ պիտի ունենար իր մոխրացող կրակները, ինչպէս ունեցեր էին Դեմետր և Գիսանէ...։

Չարադև մը կայ, ո՛վ չի գիտեր, ծնած հրեշտակէ մը՝ որուն լոյսին մէջ խաւարի շերտ մը և կրակին մէջ ծիրի կտոր մ՚է մոռցեր Աստուած։ Չարադև մը՝ որ ողջ աշխարհ իր տունն է կազմեր։ Իշխան մ՚է ան՝ որ սրտերու կը տիրէ և օձ մը՝ որ աղիքներէն ներս կը սպրդի։ Հրեշտակ մ՚է՝ որ կը նախանձի և ահռելիօրէն կը ծիծաղի ակռաներու արանքէն։ Սեւ ու սպիտակի համադրութիւն մը՝ ուր աչքը կը խաղտայ ու կը մոլորի։ Կը հրաժարի լոյսէն՝ դաւելու համար։ Ազատ մ՚է՝ որ Աստծու հետ կը սակարկէ և մարդուն հետ կը դաշնակցի։ Թրշնամի ամէն բանի որ գեղեցիկ է՝ յօնքերը կը պոստէ, երբ Աստուած կը ժպտի։ Ոսոխ ամէն բանի որ ճշմարիտ է՝ լեզուն կը մեղմիզէ, երբ Ներունին կը պատգամախօսէ։ Երբ Աստուած կը խոժոռի՝ ան կը քրքջէ, վասն զի կը զչարի՝ երբ բարին սէր կը կաթէ։ Կը քանդէ ինչ որ Ան կը շինէ, հայեացքն ըլլալով դմնէ և կամքը դաժան։ Ուր Ան գութ կը սփռէ՝ սա լեղի կը թքնէ, ուենալով սխորժակ մը դառն ու թթու։ Կը կրծէ աղիքը՝ ուր կը փթթի ծաղիկը, ըլլալով սպանիչ ամէն սերմի՝ որ կեանք մը կը յայտարերէ։ Կ՚ըսեն թէ կեանքին դէմ իսկ կրցաւ դաւել, մահը նիւթելով գեղատեսիլ և քաղցրահամ պտուղի մը մէջ՝ զոր Գիտութիւնն էր արդիւնաղրեր։ Գիտութիւնը աստուածացումի կամ ցանկութիւնը գիտութեան, որ մարդկային սեռը պիտի ենթարկէր ստեղծագործ և փրկարար Չարչարանքի...։

Նկարի զոյգը, իր երանաւէտ անմեղութեան մէջ, պիտի ունենար ակնարկի հանդիպում մը, ուր եռանկիւնի և եռաժանիի ոգորումէն դևն յաղթական պիտի գար դուրս։

Աստուածային հրաշալի պարտութիւն, որով երկիրը կը ժառանգէր մարդկային զոյգի պսակադրութեան և արգասաւորութեան օրհնութիւնը։ Իսկ ան, դևը, իր յաղթութեան մէջ իսկ զգեստնուած, — վասն զի անհաշտ է ամէն բանի հետ որ բարձր է, գէշ մը փրփրեց ժանտաժուտ այդ օրհնութեան մէջ կենսատու։ Ուր Աստուած սերմը ցանեց՝ հոն դևն իր որոմը նետեց։

Վայ չէ՞ Դիտունը։
Ցարօնի Դիտունը...։

*

Ցուն մը կայ՝ ուր նահապետը կը թագաւորէ. այսինքն արևը՝ որ իր արեգակնային դրութիւնն ունի։

Նահապետական տուն մը դժոխք մը չէ։ Ընդհակառակն դրախտ մ՚է ան, ուր աստղերու կայծերը ծաղիկներու պսակները կը լուսավառեն։ Հոն ո՛չ թաւշի փափկութիւնը կայ՝ ուր մեղկութիւնը յուլանայ և ո՛չ ալ մետաղի փայլը՝ ուր ընչաքաղցութիւնը շլանայ։ Խմաստութիւն մը կայ՝ որ նահապետի ալիքներուն մէջ կը տիրականանայ, տանտիկնոջ մատերուն և գլխին մէջ կը ժիրանայ, հարսերու առագաստներուն մէջ կը զգաստանայ և մանուկներու շրթներուն վրայ և մտքին մէջ կը վարժենայ։ Ան-

digitised by A.R.A.R.@

խարդախ սէր մը կը թեւածէ միշտ հոն, թոնիրին շուրջ՝ ուր դրախտի ընտանիքը կը բոլորուի։ Օճախի կրակն է ան՝ որ ընաւ չի մարիր։ Բաժակ մ'է բիւրեղեայ՝ որ ամէն շրթունք իր բաժինն ունի, ծերէն մինչև մանուկը, տատհայրէն մինչև ծոռնորդին։ Հրեշտակ մը կայ՝ որ կը պահպանէ անոր արբութիւնը։ Ցան հրեշտակն է այն, բոցեղէն Սերոբէ մը։

Բայց խաղաղութեան մը մէջ, ուր մաքուր երջանկութիւնը կը շնչէ՝ կրնայ հանդուրժել զեր որ պղծութիւնը չսողոսկի։

«Հարան են փախուցեր...» — քի՞չ են լսուեր Ցարօնի լացն ու շիւան, մարկան մը վայն ու վո՛ւյ, պարկեշտ առագաստի մը արբապղծումին ի լուր։

«Հարան են փախուցեր... Դեռ՝ն է փախուցեր...»։

*

Հօ՛, հօ՛, հօ՛...
Հոռովել, հօ՛...
Աւտը ոսկի ա դառել,
Ոսկի մանգաղն ա թառել
Ոսկի հունձքերի վերայ...
Փաղը գցել ա՛,
Հօ՛, հոռովել տուր, տղայ։
Փաղ արա, քաղ արա՛,
Խրձերն հաչան վա՛ղ արա...
Հօ՛, հօ՛ հոռովել, հօ՛...
Կալ արա, եզը Ջան, կալ արա,
Իմ կալատիր թալ մի տա...
Կալը կասել,
Կալը քամել,
Հա՛, կալուվար, շո՛ւտ արա՛,
Կալ ու կտից շո՛ւտ պրծա՛...
Հօ՛, ոօ՛լ, օ՛, լօ՛
Պոնբէ, հօ՛մ, պոէ՛...

Պարահանդէս չնաշխարհիկ, ուր կեանքը կ'եռուզեռի հազարումէկ ձայներով, հազարումէկ աշխատութիւններով։ Մշակ տիրոջ արտն է այն։ Վարուցանքի դատանքէն վերջ ահա հունձքի վարձատրութիւնը։ Երկընքի ցօղերով և ճակտի քրտինքով ուռճացած հասկեր ինչպէս թագ ու պսակ են կապեր ցորենի կանանչագեղ ծղօտներու գագաթին։ Աստուած է ծլեցուցեր, աճեցուցեր, հասունցուցեր։ Ապա ճիժ, պատանի, օրիորդ ու երիտասարդ, նորհարս ու փեսայ, տատ ու մամ, դրախտի ամբողջ ընտանիք դաշտ փոխադրուեր։ Մ՛հ, տեսէ՛ք և՛ այն փոքրիկ ճօճքը, ծառի մը վարաւոր ճիւղէն կախ տրուած, ուր երկնքէն ինկած հրեշտակ մը, հոռովիլի զուարթ եղանակներուն հետ ինքն ալ կը ճօճէ իր վարդաշող թաթիկները, կը թուրռայ, կը ճրւճրւայ, կը հռուղէ, կը մասնակցի դաշտի աստուածային ոգևորութեան։

Դեռն աչքը կո՛յր, ականջը խո՛ւլ...։

Ահա կը սկսի և՛ կալոցը։ Կը խմբուին կալուորները։ Թոռնիկ կամնավար՝ կը նստի կամնասայլին վրայ։ Հօ՛, հօ՛, լծկանները, հլու և անտրտունջ, կը դառնան հա՛ կը դառնան, մեղմ հարուածներուն տակ ճպռտին՝ որ աւելի կը շոյէ ու կը փայփայէ։ Կ'աշանուի ցորենը, կը տրուի քամիին՝ որ զայն կը մաքրէ և կալի կեղրոնը կը դիզուի բրգաձև։ Այս բոլորին մէջ կայ բարի ոգի մը՝ որ կը ժպտի, կը հրճուի, կը ցնծայ ոսկի ծանծերուն, ատոր հակերուն և հարուստ որաներուն մէջ՝ ուր ցորենները գիրար կը համբուրեն. կ'երգէ, կը թռչկոտի, կը խանդավառուի կալի հաշաններուն, կամնի վազքերուն և ճպռտի շառաչներուն հետ։ Այսպէս կը շարունակէ արևածագէն մինչև մարամուտ, որ ատեն կը վերջանայ օրուայ կալ ու կուտ։ Բայց դեռ ուրիշ բարդեր ալ կան միւս օրուայ համար։

Ա՛ռ, ա՛ռ...
Մի՛ ասի՛ ա՛ռ, ա՛ռ,
Է՛, կ'ասեմ կա՛լ, կա՛լ...
Հա՛, ասա՛, կալ, կալ...

Այսպէս զուարթաբանելով պատկառելի և փարելի թափօրը կը դառնայ դէպ ի դրախտ, սուրբ աշխատանքի փառաբանութիւնը խորհրդանշող խաչփունջերով զարդարուած։

*

Դրախտի ընտանիքն բոլորուեր է հիմակ կլոր սեղանին շուրջ։

digitised by A.R.A.R.@

«Արդար վաստակ ա, տղէք, պէտք է լաւ կուշտ լինել», կ'ըսէ Նահապետը դրախտի բոլոր անդամներուն։

«Արդար վաստակ ա»... Բայց չէ՞ որ դրուժներ կան, Թշնամի արդարութեան։

«Հասէք, տղէք, հասէք...։
Ողջ դրախտն է կը սասանի...
Չկայ լոյս մը՝ որ չխաւարի։
Ցորենի դէզերն են կրակել, դէ՞ն է կրակել...»։

*

«Ինչ ասել թէ արդարութիւն կայ, խիղճ կայ, Աստուած կայ...»։

Ա՛յսպէս քրթմնջելով Նահապետ՝ դատաբանի դուռն է ափ առեր։

«Կալա՛ն են կրակել, գիժերն են կրակել, հալալ դատումս են մոխթել. դատս տեսէք, դարտս լսէք...»։

Բայց դէր դատաւորին մէջ ալ է մտեր։

«Թէ յիմար չէիր՝ թող մնայիր արթուն և թոյլ չտայիր։ Որ գիմն է կրակեր՝ լաւ է ըրեր, թէ չէ այլապէս խելքերնիդ գլուխնիդ չի գար, անհաւատներ։ Թէ չկորսուիս շուտով՝ կը պատժուիս չարաչար, զգո՛յշ։ Հանդարտ մարդուն օձը չի խայթեր...»։ Կը պատասխանէ յաղթականօրէն արդարութեան պաշտօնեան։

Նահապետը պահ մը կը մնայ քարացած։

«Հանդարտ մարդուն օձը չի խայթեր»։

Ցանցաւորը ինքը Նահապետն էր, ուրեմն, այն՝ որ իր ամբողջ ընտանիքին անդամներով քարի հետ քաղուեր, մաղի հետ մաղուեր էր՝ պահպանելու համար իր օրհնեալ դրախտը։ Իսկ ով որ այրեց տարուան մը աշխատանքի պտուղը մէկ քառորդ ժամու մէջ՝ իրաւունք ունէր։ Անհաւատին ամէն չարիք հասցնել՝ ներելի է, սա՛մ է...։

«Ինչ ասել թէ արդարութիւն կայ, խիղճ կայ, Աստուած կայ...»։

Զէ՞ որ սակայն, կայ նաև անիրաւութիւնը, անզթութիւնը, դէ՞ը...։

«Կտուցը քաղցրացրէ՛լ են...»։ լսելի եղաւ անկիւնէ մը։

«Նահապետը բանտարկեալ են, դէ՞ն է բանտարկեալ...»։ լուր տարածուեցաւ ողջ գիւղին մէջ։

Ու դեռ ինչէր չէ ըրեր այդ դէր...։

*
* *

Կեռպոչ դէրը, որոնք տխմարօրէն մանկական հոգիս էին սարսափեցուցեր, մեռեր էին արդէն, ինչպէս ըսի։ Բայց Մուրատուրի այս Դէտունը ինչո՞ւ, չգիտեմ, ինծի զգացուց դէերու նոր լէգէոնի մը գոյութիւնը։ Նոյն իսկ հաւատացի թէ անոնք կան ու կ'ապրին տակաւին — ու թերևս պիտի ապրին ալ միշտ, աւա՜ղ — պիղծ, ժանտ, ոճրագործ ու արդարադաս մտքերու մէջ։

Ու դէտունի մօտէն անցած միջոցիս՝ խօսեցայ իւրովի։

Էյ Լուսաւորիչ պապ, երկու յանցանք ես գործեր։

Ինչ պէտք Ս. Կարապետի մի փոշեհան իւն, որ դու ողջ ես թողեր այդ անիծեալ կաղ–դև...։

Աւելի լաւ չէ՞ր որ փոխանակ Դեմետրի և Գիսանէի կեռպոչ դէերուն՝ մարդակերպ բոլոր դէերը կարող ըլլայիր շղթայել այս խաւարչտին Ցան մէջ յաւիտենապէս...։

1915 Գոնիա ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



ՅՈՎԱԿԻՄ ԿԷՕՐԷՕԿ

(1862–1928)

Այն սակաւաթիւ հրագներէն էր որ մնացած էին հունգարական դասակարգին համար, փայլուն և լոյսզուարթ հրագ մը՝ մարեցաւ այս փետրուարին։ Յովակիմ Կէօրէօկ, Gyergyószentmiklós-ի (այսօրուան անունովը Gheorgheni) ժողովրդապետը՝ մի քանի օրուան հիւանդութենէ վերջ հեռացաւ այս աշխարհէն։ Հայազգաքին ժամկոչին զաւակն էր նա. հայրը Յովսէփ՝ 50 տարի ժամկոչութիւն ըրած է Sza-

digitised by A.R.A.R.@